տէք սորա հարազատ և պէտ ծառայութիւնները. գիտէք որ ունէր սովորութիւն ամենայն տարի օգնութիւն առնել տնանկաց և կարօտելոցը. գիտէք որ բաժանէր աղուրս, ապրանս և զգրաստ, որ աղքատքն կերակրվէին, հագուստ շինէին, և զպիտոյս իւրեանց լցուցանէին. Սորա մեծագործութիւնները շատ են եղեալ քաղաքիս միջումն և ականատես էք. Եւ մանաւանդ երևում է առաջի աչաց ձեր՝ կառուցեալ քարեայ ուսումնարանն որ 'ի դաւթեոջ սուրբ եկեղեցւոյս, ուսանին մանկտիք մեր. Սա առողջ ժամանակին աշխատէր առեալցնել թիւ աշակերտաց, որ մինչև 150 մանկտիք ուսանէին, բայց երբ տկարացուսա՝ փոքր առ փոքր սակաւաթիւ եղեն աշակերտքն. Զեզ յայտնի է Վ. Եհսափառ Կաթողիկոսի այց առնելն 'ի մեր քաղաք և յորդորելն զեշխանս առ 'ի կառուցանել վարժատուն. Սա որպէս բարի մարդ՝ և 'ի բարի սրտէ իւրմէ բղխեաց զբարութիւն, 'ի ներկայութեան իշխանաց քաղաքիս՝ յայտնեաց Վ. Եհսափառ Կաթողիկոսին զկամ իւր, և խոստացաւ կատարել զկամն Վ. Եհսափառին. առ այն և Վ. Եհսափառն օրհնեաց զհոգի սորա, և եղև շնորհակալ. որև կատարելով սա զխոստումն իւր, քանի տեսակ օրհնութեան Կոնդակս ստացաւ Վ. Եհսափառ Կաթողիկոսէն. և 'ի մէջ Համաթերթիից գրելով հրատարակվեցաւ Սորին մեծագործութեան անուն. այսպիսի բարի օրինակներ առնելով՝ եղեալ է Ձեր ուսուցիչ. Ահա այժմ ես լինի ուսուցիչ ասելով Ձեզ. "Եղբարք իմ և սիրելիք, տեսանէք զայս իմ վերջին օր, զոր եկեալ կամ անմուռնչ կացեալ 'ի ծոց սուրբ եկեղեցւոյս, կամիմ զիմ հրաժարական ողջոյնն Ձեզ ասել, մնացէք բարեաւ և խաղաղութեամբ՝ ով սիրելիք իմ և անձկալիք, և խնդրեմ՝ եթէ ես ձեր սիրան խոցեալ իցեմ, ներեցէք ինձ. և աղօթս արարէք վասն իմ առ Աստուած՝ զի նեմեսցէ յանցանաց իմոց և Ձեր.

Արդ՝ ով բարեպաշտն ժողովուրդք, ես հոգեւոր հովիւս Ձեր՝ զորս խօսեցայ 'ի դիմաց հանդուցելոյս, խնդրեմ պահպանել 'ի մտի Ձեր, և առաջի աչաց ձեր ունիլ օրս այս. Դարձեալ խնդրեմ և աղաչեմ զՁեզ, միաբերան ազօթս առնել ջերմեռանդ սրտիւ՝ 'ի դէմս սուրբ պատարագին Քրիստոսի, և բարեխօս ձգեցէք հաշտարար անմահ պատարագն Քրիստոսի, և ամենօրհնեալ սուրբ Կոյսն, զի թողութիւն շնորհեսցէ մարդկօրէն սխալանաց սորին՝ ներկայ հանդուցելոյս, և դասեսցէ զհոգի սորա 'ի դաս հրեշտակաց և արդարոց. իսկ տրտմեցելոց և սգաւորաց սիրտն՝ Հոգին սուրբ մխիթարեսցէ, ամէն.

Խրիմեան Հայրապետ Մահագրոյ.

Աղէքսանդրապոլցի Ռափայէլեանց մեծարգոյ, Գրիգոր Աղայն, որ արքունական ճանապարհի խճայարդ շինութիւնը ինքն ընդունած է կապալառութեամբ Սիմոնովկայ Մալականի գիւղիցը մինչև Ախտայ գիւղը, և նոյն ճանապարհը պատրաստել տալու համար գանվում է վանուցս Ցամաքաբերդ գիւղումը, տեսնելով սոյն սուրբ Անապատի կրզելոյս զառիվեր ճանապարհի առապար դրութիւնը, ստիպեալ իւր բարեպաշտութիւնից բարեհաճեցաւ տալ շինել մօտերս՝ իւր ծախիւքը՝ մի պատուական յարդ և լայն ճանապարհ համապատոյտ, որ հանում է կղզելոյս ստորոտիցը մինչև նորա կատարը. ուր շինուած են սուրբ Կարապետ լուսաւորչահիմն և սուրբ Առաքելոց անուանեալ Տաճարքը. ուր միշտ յաճախում են ուխտաւորքը երբ գիմում են այս տեղ 'ի վանս Սեւանու. Այդ ճանապարհը ունի մի քառորդ վերստի չափ երկարութիւն, և իւր կարևորութեամբը հանդերձ բաւականին շքեղութիւն է աւելացրել կղզելոյս բնական դրից վերայ, որ այսու իւր բազմաղարեան նոյնութիւնը փոքր 'ի շատէ փոխած է երևում.

Եթէ այս Պ. Գրիգորի պէս այլ ջերմեռանդ անձինք գտնուին Մենաստանիս համար, մի բարեբաղդ վիճակ կ'գտնէ սուրբ Սեւանը, որ մեր Ազգի համար սակաւ փառք չէ՝ թէ իւր անցեալովը և թէ իւր համայն նշանակութեամբը, ինչ տեղ կը վայելէ գոյանալ մի ազգօգուտ և արդիւնաւէտ վանք ըստ ուսումնական լուսաւորութեանն՝ իւր տեղւոյ յարմարութեամբն և պատուականութեամբ.

Այս տարի ձմեռնային ցրտի հոսանքը շատ երկար տևեց այս Վարաժնունեաց գաւառումը

(Դարաչիչակ). վար ու ցանքը արդէն բաւական ուշացած է ցրտի պատճառաւ, որով կանուչած ցորենը տակաւին նոր բուսածից շատ տարբեր չէ երևում ներկայումս, այն ինչ, ինչպէս լսում եմ, այդ կողմերը հունձը հասած է. բայց պէտք է ասել՝ որ արտօրայքը Աստուծով լաւ երես են ցոյց տալիս։ Այս ցրտութիւնը մի դժբախտութեան անսովոր հարուած տուեց՝ վերջապէս նահանգիս ողորմելի գիւղացիներին. և այս պատահմունքը այսպէս եղաւ։ Անցեալ յունիս ամսոյ 25 ին երաշտային եղանակը յանկարծ փոխուեց անձրևային եղանակի, և անձրևը մի քանի օր տևելուց յետոյ ցրտութիւնը սաստկացաւ և ձիւն դրեց մօտակայ սարերի վրայ. և ըստ որում ոչխարները արդէն գտնվում էին սարերումը, և քանի օրով առաջ բրդերը կտրած էին, այս պատճառաւ ցուրտը շատ ոչխարներ կոտորեց նոյն դիշերումը, ինչպէս ասում են, ամեն մի գիւղից 150, 200 և 300 հատերով, և բոլորը ծնած և կթի (կաթնատու) ոչխարներ։ Այս դժբախտ պատահմունքը և կորուստը՝ ողորմելի ժողովրդոց համար փոքր նշանակութիւն չունի։ Մի և նոյն վնասը պատահած է նոյն միջոցում՝ ինչպէս լսում եմ՝ նաև Ապարանայ նահանգումը և գաղթական այլազգեաց մէջ էլ, որք ամենայն տարի Ղազախից և այլ ջերմ երկիրներից գալով վերաբնակում են այս Վարաժնունեաց լեռնոտներումը, և աշնանը վերադառնում են իւրեանց տեղերը, որոնք թէ աւազակութեամբ և թէ արօտատեղիքը յափշտակելով՝ սակաւ վնաս և նեղութիւն և թշնամութիւն չեն հասցնում և պատճառում Հայոց մերձակայ գիւղերին։

Խ. Օ. Նդէայ Վարդապետ Ջալալեանց։
Է 10-ն յունիսի 1870 -դ
Է Ս. Անդրեան ՍԼՈՒ։

Խմբագրական Արարատ Ամսագրոյ։

Նիժ գեղջ ժողովրդականաց բարեփափագ ըղձից՝ Վեհափառ Հայրապետի ազգասէր կամաց համաձայն, որ և Նորին Օծութեան Կոնդակաւ և յատուկ հրաւանաւ՝ նոյն գեղջ Նորաշէն Եկեղեցւոյ օծման առիթով՝ անձին աշխատութեամբ՝ կատարումն տալով հաստատեցի տեղւոյն և մօտակայ գիւղօրէից մէջ գտնուած Հայ մանկտեաց դաստիարակութեան համար՝ մի Նոր կրթարան։ Եւ դպրոցին նիւթական միջոցի կարօտութիւնը լցնելու և յարատևութեան մէջ պահպանելու դիտմամբ՝ խնամարկուք ընտրեցի յաղգասիրաց, և դպրոցի կառավարութիւնը յանձնեցի Նոցա ջանից և աշխատութեանց. որք և իրրև պարտականութիւն ազգասիրութեան իւրեանց յանձն առին սիրով յառաջ վարել ստանձնեալ պաշտօնը և միանգամայն հոգալ 'ի սեպհականութեանց իւրեանց ուսուցչաց և դպրոցի ծախսը։

Ներկայ միջոցներս եկեղեցեաց այցելութեամբ գիւղերը շրջագայելով, և իւրաքանչիւր եկեղեցւոյ պարսպի մէջ՝ բարձու հրամանաւ Վեհափառին մերոյ՝ ծխական կրթարաններ բանալ և հարկաւոր պատուէրները Քահանայից և Ժողովրդոյ աւանդելով և կարգադրելով, պատահեցայ Նիժ գիւղ, որոյ բաղկացութիւնը հինգ հարիւր տանց կ՚հասնի. ուր և Նորաբաց կրթարանի յառաջադիմութիւնը սակաւ ինչ տեղեկանալու իրաւ ունենալով, մի մի բոլոր աշակերտները իւրաքանչիւր ուսանելի առարկայից մէջ հարկ համարեցի հարցափորձել ինքնին. և գտի սուղ միջոցի մէջ բաւական յառաջադէմ, որ արդարև անակնուանելի էր տեսնել մայրենի լեզուի անտեղեակ երեխայք՝ ուղիղ խօսել, գրել յստակ և կարդալ վարժ։

Ահա սորա հետ՝ ուրախութեամբ սրտի՝ ամսագրոյդ ուղղելով աշակերտաց թուոց և յառաջադիմութեանց ցուցակը *) խնդրեմ հրատարակել պատուական թերթերուդ մէջ 'ի խրախոյս ծնողաց Նոցին և ուսումնասէր ազգասիրաց։

ՓՈԽԱՆՈՐԴ ՆՈՒԽ Աբեղայ Վարդապետ։
Ի 18 յունվարի 1870 -դ
Է Ք. ՆՈՒԽԻ։

(*) Բոլոր աշակերտաց թիւն է. 41. եւ երկու դասից բաժանուած են. դաս տուեալ առարկայքն են, ընթերցանութիւն, քերականութիւն, թուաբերն, թարգմանութիւն, թուաբանութիւն, վայելչագրութիւն, երգեցողութիւն եւ կրօնագիտութիւն։

Ցուցակին մէջ ըստ բաւականին գոնացուցիչ էին Բ. դասի աշակերտաց (15 էն 4 ին բացառութեամբ) յառաջադիմութիւնը նոյն առարկայից մէջ։

Ն. Խ.